

ՆԱԻԱՍԱՐԴ ԱԶԳԱԿ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ԳՐԱԲԱԿԱՆԸ՝ ՅԱՐԱՏԵԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ՀԱԻԱՏՔ

Բազմիցս հաստատած ենք, որ կեանքի բոլոր մարզերուն էլ յատկապէս մարզաշխարհին մէջ յաջողութեան միակ գրաւականը յարատեւ աշխատանքն է ու գործին նկատմամբ հաւատքը, համոզումը:

Այս օրերուն, երբ Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի, ֆութպոլի մեր խումբերը նահանջի մէջ են, անդին՝ նոյն դժուարութիւնները ունեցող փինկ փոնկի կամ աթլետիկ մեր կազմերը անտեսելով այդ դժուարութիւնները՝ կը պայքարին ոգի ի բոնին էլ փաստօրէն ներկայ են ոչ միայն լիբանանեան, այլեւ՝ համաարաբական առումով առաջնակարգ դիրքերու վրայ:

Ողջունելի ու հպարտութիւն առթող այս երեւոյթը, անհատական մարզախաղերու այս յաջողութիւնը լաւագոյն օրինակը պէտք է ծառայէ հաւաքական մարզախաղերու մէջ մեր խումբերուն:

Ֆութպոլի, պասքեթպոլի մեր տղաքը պէտք է օրինակ առնեն իրենց քոյրերէն էլ եղբայրներէն, ներշնչուին անոնց յաղթանակներով, որոնք կը կերտուին շնորհիւ անոնց յարատեւ աշխատանքին, աննկուն կամքին ու պայքարելու վճռականութեան, բայց մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ականի անոնց գաղափարական հաւատքին ու համոզումին:

Փաստօրէն երբ կայ միութեանական այդ հասկացողութիւնը, անխուսափելիօրէն նաեւ կայ յաջողութիւնը՝ ՅԱՂԹԱՆԱԿԸ: Կը սպասենք, ուրեմն, որ անհատական մարզախաղերու մեր աննման տղոց ու աղջիկներուն իրագործումները կրկնուին նա՛եւ հաւաքական մարզախաղերու մեր երկսեռ խումբերուն մարզիկներուն մօտ, անպայմա՛ն:

ԼԻԲԱՆԱՆ Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԵՆ ԳՈՒՐՍ ՄԵԱՑ ԻՆՏԻԱՆՍՓՈՒՍԻ ՄԷՉ ԿԱՅԱՑՈՂ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, 29 Օգոստոս 2002, երեկոյեան ժամը 7:00ին, լիբանանցի բոլոր մարզասէրները «գամուած» էին պատկերասփիւղին դիմաց, պասքեթպոլի աշխարհի ախոյեանութեան ծիրէն ներս հետեւելու Լիբանանի տղոց ազգային խումբին կատարելիք առաջին մրցումին, որուն ընթացքին ան պիտի մրցէր պասքեթպոլի աշխարհի հսկաներէն Պրագիլի դէմ: Մրցումը արարտեցաւ 102 - 73, ի նպաստ Պրագիլի:

Ծիշդ պիտի չըլլար ըսել, թէ լիբանանցիք յուսախաբ եղան, սակայն արդիւնքը անսպասելի էր:

Ազգային խումբի պատասխանատուները, մարզիկները թէ համակիրները երբեք ալ յաւակնութիւնը չէին ունեցած յայտարարելու, թէ պարտութեան պիտի մատնեն Պրագիլի հզօր կազմը, սակայն դաշտին վրայ մեր մարզիկները կորսուած էին, էլ տրուած ըլլալով, որ անոնք միջազգային որոշ փորձառութիւն ունէին, անսպասելի էր այդ անկայուն վիճակը դաշտին վրայ: Անոնք այն տպաւորութիւնը ձգեցին, թէ կը մրցէին լիբանանեան մարզադաշտերու վրայ...

Մարզիչ Նիւմընի յորդորները եւ թեքնիքները ոչ մէկ բան փոխեցին կէտերու լայն բացը նուա-



զեցնելու առաջադրանքով եւ մրցումի արարտիկ կէտերու տարբերութիւնը 29 էր:

Շար.ը՝ էջ 3

Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՊԱՏԻԻ ԿԸ ԲԵՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐԱԲԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ

Փինկ փոնկի լիբանանեան շրջանակներուն մէջ առաջին օրէն ցայտօր, Հ.Մ.Ը.Մ.ի երկսեռ մարզիկները միշտ ալ գտնուած են յառաջապահ դիրքերուն վրայ: Այս տարի, համաարաբական խաղերուն, անոնք դարձեալ ունեցան տպաւորիչ ելոյթներ եւ պատիւ բերին Լիբանանի ազգային խումբին:

Այս մասին, մեր համարի 4րդ էջով կարդալ շահեկան հարցազրոյց մը Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն էլ պատասխանատուներուն հետ, որոնք յաւելեալ լոյս կը սփռեն այդ հոլովոյթին վրայ:



ملحق أرتاك

ԼՈՒՐԵՐ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԷ ԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

Այսօր՝ Չորեքշաբթի, 4 Սեպտեմբերին, Պեյրուի Մարզական Ասոցիացիայի փակ սրահին մեջ տեղի պիտի ունենայ Անկարներու Շրջանային 3րդ Ողիմպիականի բացումը:

Ողիմպիականին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն միջին արեւելեան եւ հիւսիս-ափրիկեան 18 երկիրներէ ժամանած 420 մարզիկներ եւ 200 մարզիչներ ու պատասխանատուներ:

Ողիմպիականին մասնակցող անկարներուն բարձր մակարդակի հոգատարութիւն տրամադրելու համար 500 կամաւորներ գործի պիտի լծուին մրցումներու ամբողջ տևողութեան:



Ողիմպիականը կ'ընդգրկէ 5 մարզաձեւեր՝ աթլետիկ, ֆութպոլ, պասքեթպոլ, փինկ փոնկ եւ լողարշաւ:

ԱԼԵՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ «ՀՈՒՍԷՅ ՊԻՉ»Ի ՄՐՑԱՇԱՐՔԻ ԱԽՈՅԵԱՆ

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան «Հոլիտէյ Պիչ»ի թենիսի տարեկան մրցաշարքի արարտական մրցումները: Ալեքս Յարութիւնեան 4-6, 6-3 եւ 10-3 արդիւնքով պարտութեան մատնելով Լիբանանի թիւ 1 Ֆատի Եուսուֆը՝ հանդիսացաւ ախոյեան:

Զոյգ տղոց մրցումներուն, Ֆատի Եուսուֆ եւ Սերժ Տազէսեան 6-1 եւ 6-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով՝ նոյնպէս հանդիսացան ախոյեան:



րուն, Լիբանան 53-37 արդիւնքով պարտութեան մատնելով Ալճերիան՝ հանդիսացաւ ախոյեան:

Յորդանան, իր կարգին, պարտութեան մատնեց Սուրիան եւ հանդիսացաւ երրորդ: Սուրիոյ կազմէն հանդէս կու գար սուրիահայ Թալիհ Զէյթունեանը:

Արաբական դպրոցներու ախոյեանութեան փակումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 6 Սեպտեմբերին:

ՓԻԵՆ ԻՍԱ ԿԸ ՄԻԱՆԱՅ ՕԼԻՄՓԻՔԻՆ՝ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐՈՎ

Լիբանանեան ֆութպոլի պատմութեան մեջ աննախընթաց քայլով մը, հարաւային ափրիկեցի ֆութպոլիստ Փիեն Իսա ստորագրեց Օլիմպիքի տոմարներուն վրայ: Համաձայնագիրը կ'արժէր աւելի քան մէկ միլիոն տոլար:



Իսա, Սիլվիո եւ Էտիլարն:

Փիեն Իսա ծագումով լիբանանցի է. ան ունի Հարաւային Ափրիկէի հպատակութիւն եւ այդ երկրին շապիկով մասնակցած է 1998ի եւ 2002ի Մոնտիալներուն: Իսա այս եղանակին Ա. դասակարգ բարձրացած Օլիմպիքի կազմէն պիտի խաղայ իբրեւ լիբանանցի: Իսա մաս կազմած է նաեւ Մարսէլի:

Օլիմպիքի տոմարներուն վրայ ստորագրեցին նաեւ երկու պրագիցիներ՝ Սիլվիո եւ Էտիլարն, 800 հազար տոլար արժողութեամբ համաձայնագիրով մը:

ԹԱՍԼԱՔԵԱՆ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԻՇԱԿԻՐ

Մէկուկէս շաբաթ է վեր Լիբանան կը հիւրընկալէ Արաբական երկիրներու դպրոցական 14րդ ախոյեանութիւնը:

Այս ծիրէն ներս, 1 Սեպտեմբերին տեղի ունեցող աթլետիկայի 2րդ օրուան մրցումներուն, Լիբանանէն Կրեթթա Թասլաքեան ախոյեանութեան մրցանիշ մը կոտրեց, երբ 400 մետրի մրցումը արտօնեց 55,61 երկվայրկեանէն: Նախորդ մրցանիշը (57,000 երկվ.) կը պատկանէր թունուզցի Մանալ Ալմուհսինիի:

Միեւնոյն խաղերու ծիրէն ներս, պասքեթպոլի աղջկանց մրցումներ:





RAFFI SPORT

Պուրճ - Համուտ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլեճի փողոց

ԼԻՔԱՆԱՆ Ա ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ԻՆՏԻԱՆԱՓՈԼԻՍԻ ՄԷՉ...

Շարունակում է՝ Ա. Էջեն



Մրցումի ասարտին, թե՛ մարզիչ Նիմըն է թե՛ մարզիկները ընդունեցին իրենց անկազմակերպ ըլլալը եւ խոստացան աւելի լուրջ եւ վճռական ներկայանալ դաշտ՝ Ուրբաթ, 30 Օգոստոսի մրցումին, որուն ընթացքին պիտի մրցէին Փորթո Ռիքոյի դէմ, որ իր առաջին մրցումին պարտութեան մատնած էր Թուրքիան:

Լիբանան Ա. քորթրին 21 - 2 արդիւնքով



նահանջի մէջ էր: Կար այն տպաւորութիւնը բոլորին մօտ, թէ այս ճակատամարտին պարտութիւնը շատ աւելի ծանր պիտի ըլլար նախորդէն:

Սակայն, 2րդ եւ 3րդ քորթրներուն Լիբանան շատ զօրաւոր «վերադարձ» մը ունեցաւ, եւ կազմակերպեց, «մէն թու մէն» խաղաոճով եւ հակայարձակումներով յաջողեցաւ կէտերու տարբերութիւնը նուազեցնել մինչեւ չորս կէտի: Սակայն 4րդ եւ ամէնէն վճռական քորթրին, Փորթո Ռիքո արագ տեղաշարժերով եւ հակայարձակողականներով՝ յաջողեցաւ կէտերու տարբերութիւնը դարձեալ բարձրացրնել եւ ճակատումը ասարտել 22 կէտի առաւելութեամբ՝ 99 - 77:

Շաբաթ, 31 Օգոստոսին, պիտի կայանար վճռական ճակատումը: Վճռական այն իմաստով, որ յաղթանակի մը պարագային, Լիբանան պիտի ապահովէր Բ. հանգրուանի իր տոմսը, տրուած ըլլալով, որ իր մրցակիցը՝ Թուրքիա, իր նախորդ երկու մրցումներուն Լիբանանի նման պարտութիւններ կրած էր Պրագիլէն եւ Փորթո Ռիքոյէն:

Մինչեւ կիսախաղ, Լիբանան թէեւ պարտուած էր, բայց որոշ չափով ընդունելի խաղարկութիւն կը ցուցաբերէր: Սակայն 3րդ քորթրին մեր տղաքը սկսան յոգնութեան նշաններ ցոյց տալ եւ ի վերջոյ խաղը զիջի մրցակիցին՝ 107 - 80 արդիւնքով: Թուրքիա հանդիսացաւ Բ. խմբակին մէջ Պրագիլի եւ Փորթո Ռիքոյի կողքին Բ. հանգրուանի տոմսը ապահովող 3րդ խումբը:

Եզրակացութիւն: Պաշտպանողական իմաստով, Լիբանան «մէն թու մէն» խաղարկութիւնը որոշ ժամանակ յաջող կերպով կրցաւ կիրարկել, սակայն ֆիզիքական իմաս-

տով նոյն ընթացքը եւ թափը չկրցաւ շարունակել ամբողջ մրցումի մը տեսողութեան: Իսկ մրցակից խումբերը բաց խաղարկութեան դիմելու պարագային՝ Լիբանան չկրցաւ «3 կէտ»նոց գիծը պաշտպանել, ինչ որ պատճառ դարձաւ, որ մրցակից խումբը ի՛նք «43 կէտ»նոց հանգիստ կողովներ նշանակէ: Շատ յաճախ նաեւ մեր խումբը ձախողեցաւ «տիֆէն-սիւ ռիպաունտ»ներ հաւաքելու մէջ:

Յարձակողական իմաստով, Լիբանանի եւ մրցակից խումբերու մարզիկներուն միջեւ հասակներու տարբերութիւնը նաեւ պատճառ դարձաւ, որ շատ անգամ լիբանանցի մարզիկները չյաջողին ճեղքել մրցակից պաշտպանողականը: Իսկ հեռուէն «շուրթ»երու մէջ, մանաւանդ «թրի փոյնթ»երը ձախող էին:

Այսուհանդերձ, այսպիսի մրցաշարքի մը Լիբանանի մասնակցութիւնը առաջին անգամ ըլլալով քաջալերելի եւ խրախուսական է անշուշտ, այն իմաստով, որ «փոքր» Լիբանանը բարձր կարողութիւններով ինքզինք պարտադրեց եւ հասաւ Ինտիանափոլիսի մրցումներուն, ինչ որ ցուցանիչ է մարզական աշխարհին, մանաւանդ պասքեթպոլիս մէջ Լիբանանի յաջող վերելքին: Քաջալերելի էր նաեւ լիբանանցի բազմաթիւ համակիրներուն ներկայութիւնը թրիփոյններուն մէջ. անոնք ոգի ի բոին նեցուկ կանգնեցան իրենց խումբին:

Մինչ այդ, մրցաշարքը կը շարունակուի մեծ թափով եւ Բ. հանգրուանի մրցումները արդէն իսկ սկսած են:

●ԼԻՔԱՆԱՆԻ պասքեթպոլի ֆետերասիոնը պաշտօնագրկեց հաւաքականի մարզիչ Ճոն Նիմընը, «վարքային, վարչական եւ թեք-նիք» պատճառներով:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԿԱԶՄԻՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ

«Նաւասարդ»-ի մեր այս թիւով կը ներկայացը-
նենք շահեկան հարցազրոյց մը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի փինկ
փոնկի աղջկանց կազմին, ինչպէս նաեւ պատաս-
խանատու եւ նախկին մարզիկ Րաֆֆի Մունջողլ-
եանի հետ: Ինչո՞ւ այս հարցազրոյցը. որովհետեւ
վերջերս Ամմանի մէջ (Յորդանան) տեղի ունեցած
արաբական ազգային խումբերու ախոյեանութեան
մրցաշարքին, անոնք արձանագրեցին համոզիչ ար-
դիւնքներ:

Ստորեւ՝ հարցազրոյցին շահեկան բաժինները.



ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչ կրնաք ըսել, Օգոստոսին Ամմանի մէջ տեղի ունե-
ցած Արաբական ազգային խումբերու ախոյեանութեան մրցաշարքին
մասին, ուր Լիբանանի աղջկանց խումբը գրաւեց երրորդ դիրքը, արժա-
նանալով պրոնզ մետալին: Լաւ պատրաստուած էիք այդ մրցաշար-
քին մասնակցելու համար:


ՊԱՏԱՍԽԱՆ.- Առաջին հերթին կրնանք ըսել, որ Հ.Մ.Ը.Մ.Ի աղ-
ջիկները՝ Լիզա Պարիքեան, Լարա Քէչէպաշեան եւ Նոել Քէշիշեան
ազգային խումբին հետ իրենց առաւելագոյնը տուին եւ իրենց կատա-
րած բոլոր մրցումներուն ալ յաղթանակներ արձանագրեցին, բայց եւ-
այնպէս առանձինն տիտղոսի տիրանալ կարելի չէ: Տղոց հաւաքակա-
նին մաս կը կազմէին Ռազմիկ Շեմեմեան եւ Ալֆրէտ-Նաժըմ Սար-
գիսեան:

Ունինք արհեստավարժ մարզիկի դրութիւնը, ինչ որ միշտ ալ նեղ
կացութեան կը մատնէ Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ մարզիկները արհեստա-
վարժ չեն: Անոնք իրենց գործերէն եւ դպրոցներէն ետք՝ փորձեր կը
կատարեն:


Ամմանի մէջ տեղի ունեցած այս մրցաշարքին երեք տիտղոսներուն
(տղաք, աղջիկներ եւ կրտսերներ) տիրացած Եգիպտոսի ազգային
խումբերը արհեստավարժ մարզիկներ են, որոնք փորձերէ բացի ոչինչ
կը կատարեն: Վերջին տասը տարիներուն անոնք գրեթէ եղած են տի-
րապետողը եւ շահած՝ շուրջ ութ տիտղոսներ:

Սակայն կու գանք հաստատելու, որ Հ.Մ.Ը.Մ.Ի մարզիկները այս
մրցաշարքին մասնակցեցան լիբանանեան մակարդակով իրենց առա-
ւելագոյն պատրաստութիւնները կատարած:

**SALON
MANO**
For Men & Kids



The right choice...



Bourj Hamoud
Municipality Street
Center Arine, 1st Fl.
Tel.: 01/262181



Հ.Մ.Ը.Մ.Ի աղջկանց ախոյեան խումբը, երիտասարդութեան եւ
մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի մօտ: Զախէն
աջ՝ Ծովիկ Տէր Ղազարեան, Րաֆֆի Մունջողլեան, Միշէլ տը Ծա-
տարեան (Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնի նախագահ), նա-
խարար Սեպուհ Յովնանեան, Լարա Քէչէպաշեան, Լիզա Պարիքեան
եւ Նոել Քէշիշեան:

Հ.- Արդեօք Լիբանանի ազգային խումբը ունի՞ իր մարզիչը:

Պ.- Ներկայիս Չինաստանէն ժամանած մարզիչ մը վեց ամսուան
համար կը մարզէ Լիբանանի աղջկանց ազգային խումբը, որմէ
Հ.Մ.Ը.Մ.Ի մարզիկները կը փորձեն առաւելագոյն ձեւով օգտուիլ:

Ակուսք մը կամ ազգային խումբ մը լաւ արդիւնք արձանագրելու
համար նաեւ պէտք ունի մշտական մարզիչի մը, ինչ որ բնականաբար
նիւթական մեծ ծախսերու կը կարօտի: Երկրորդ՝ խումբին մարզիկնե-

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

«Չար բախտ»ի բերումով, Եու. Էս. Օփընի առաջին հանգրուանի մրցումներում՝ աշխարհի թիվ 16, 2002ի Ուիմպլերի աւարտականին հասած արժանթինահայ Դալիթ Նալպանտեան պիտի մրցէր հայրենակիցի մը հետ՝ Հայաստանը ներկայացնող Սարգիս Սարգսեանի:

Մրցումը վերջ գտաւ Սարգսեանի լայն յաղթանակով՝ 6 - 1, 6 - 4, 6 - 4: 99 վայրկեան տեւած այս ճակատումին, Սարգսեան 12 «էյս» եւ 44 «ուիմըր» արձանագրեց:

1998ին Նալպանտեան շահած էր Եու. Էս. Օփընի կրտսերներու ախոյեանութիւնը: Ինչ կը վերաբերի 29ամեայ Սարգսեանի, որ այժմ 97րդ դասուած է, ան նախապէս 1995ին եւ 1997ին յաջողած է Եու. Էս. Օփընի 3րդ հանգրուան հասնիլ:

Բ. հանգրուանին, Սարգսեան 2 - 6, 6 - 3, 6 - 4, 6-7 եւ 6 - 4 արդիւնքով տապալեց գերմանացի Ա. Փոփը:

Կոփամարտի Եւրոպայի կրտսերներու ախոյեանութեան, որ տեղի ունեցաւ Օգոստոսին Լվովի մէջ՝ Ուքրանիա, Հայաստանը ներկայացնող Էտկար Մանուկեան հանդիսացաւ 54 քվ. դասակարգի ախոյեան, աւարտական հանգրուանին պարտութեան մատնելով նախապէս երեւանաբնակ, այժմ Ռուսիան ներկայացնող Էտուարտ Համբարձումեանը:

Սամուէլ Մաթեոսեան (67 քվ. դասակարգ) եւ Վարդան Գրիգորեան (71 քվ. դասակարգ) շահեցան պրոնզ մետալներ: Ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը բերող հայրենի 9 մարզիկներէն ուրն առաջին 5 դիրքերէն մէկը գրաւեցին, որուն շնորհիւ Հայաստան 35 ազգային խումբերու մէջ 4րդ հանդիսացաւ:

Ողջունելի արդիւնքներ՝ Հայաստանի կոփամարտի ապագային հաշուոյն:

Լիթվանիոյ մայրաքաղաք Վիլնիուսի մէջ տեղի ունեցող Եւրոպայի կրտսերներու ազատ ըմբշամարտի ախոյեանութեան, 46 քվ. դասակարգի մրցումներուն՝ Հայաստանէն Գեղամ Պապախանեան հանդիսացաւ ախոյեան: Սուրէն Ատեան (42 քվ. դասակարգ) հանդիսացաւ երրորդ:

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնը


30 Օգոստոսին, Եու. Է. Էֆ. Ա.ի գտումի

ջնջեց Լվովի մէջ Օգոստոս 21ին Լաթվիոյ հաւաքականին հետ կատարուելիք բարեկամական մրցումը, որովհետեւ Հայաստանի կազմէն 5 մարզիկներու վիզաները մերժուեցան:

«Անոնք (լաթվիացիները) փաստեր ուզեցին, թէ այդ մարզիկները հայկական քաղաքացիութիւն ունին. մենք չկրցանք նման փաստեր հայթայթել, յայտնեց Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնի պատասխանատու մը, խոստանալով, որ մինչեւ Եւրո-2004ի գտումի մրցաշարքին Հայաստանի առաջին մրցումը Ուքրանիոյ դէմ (Սեպտեմբեր 7), հարցը լուծուած պիտի ըլլայ:

Նշենք, որ Եւրո-2004ի ախոյեանութեան գտումներու ծիրէն ներս Հայաստան (6րդ խմբակ) նաեւ պիտի ճակատի Սպանիոյ, Հիւսիսային Իրլանտայի եւ Յունաստանի դէմ:

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնին համաձայն՝ Եու. Է. Էֆ. Ա.ի նախագահ Լեոնարտ Եոհանսըն մօտ ապագային պիտի այցելէ Հայաստան: «Արմէնփրէս» կը տեղեկացնէ նաեւ, թէ Թուրքիոյ ֆուտպոլի ֆետերասիոնի պատուոյ նախագահ Սենէշ Էրզիկի Հայաստան այցելութիւնը «բացառուած չէ», տրուած ըլլալով, որ այս վերջինը նոյնպէս Հայաստան այցելելու հրաւեր ստացած է:



Սարգսեան

դարձի մրցումներուն ծիրէն ներս, Երեւանի «Սպարտակ»ը ժընեի մէջ 3 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց տեղւոյն Սերվէթէն: Նշենք, որ երթի մրցումներուն, Երեւանի մէջ, Սպարտակ դարձեալ պարտուած էր, այս անգամ՝ 2 - 0 արդիւնքով:

Եւրոպայի մրցաշարքերու գտումներու ծիրէն ներս «Սպարտակ» (նախկին «Յեսենտ») կը կատարէր իր պատմութեան 10րդ մրցումը եւ կը կրէր... 10րդ պարտութիւնը:

Սեպտեմբեր 8էն 12 Մոսկուայի մէջ տեղի պիտի ունենայ իւրայատուկ մրցաշարք՝ Ռուսիոյ եւ աշխարհի ճատրակի հաւաքականներուն միջեւ: Աւանդաբար «դարու մրցաշարք» կոչուող այս մրցաշարքը, որ նախապէս միշտ ալ աւարտած է նախկին Խորհրդային Միութեան յաղթանակով՝ աշխարհի հաւաքականին դէմ, այս տարի դարձեալ պիտի ընդգրկէ աշխարհի հօգրագոյն վարպետները: Ռուսիոյ հաւաքականի 12 անդամներէն յիշենք Գասպարովը, Քրամնիքը, Քարփովը, Խալիֆմանը, իսկ աշխարհի հաւաքականէն՝ Անանտը, Փոնոմարիովը, Փօլկարը եւ Հայաստանի թիւ 1ը՝ Վլատիմիր Յակոբեանը:



ՃԱՇԱՐԱՆ ՈՒԱՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(Ժուրտ Էլ Պալլուք. Պսալիմէն դէպի Պրոսմանայի ճամբուն վրայ)

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադամ ճաշեր նաեւ ըստ ապսպրանքի:
- Ամէն Շաբաթ երեկոները եւ Կիրակի կէսօրին, յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արարական պարուի:
- Փոքրերու յատուկ խաղավայր:
- Կը ստանանք միութեանական եւ անճանական խրախուսանքներ յարմար գիներով:

ԾԱՆՕԹ.- 3ատուկ ճաշացուցակ, 30 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օդի, գարեջուր եւ զովացուցիչ:

Մէկ անձի համար միայն 17\$ Ըեռ : 04/808707 03/360667

ՖՈՒԹՊՈՒԼ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍԱՆ ԻՐԵՆՑ ՎՐԱՅ ԿԵԴՐՈՆԱՑՆԵԼ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՍԱՐՉԱԿՆԵՐԸ

Աշխարհի ամենէն մեծ ժողովրդականութիւն վայելող մարզախաղը՝ ֆութպոլը թէև հինգ ցամաքամասերուն մէջ ալ լայն տարածում գտած է, սակայն ամենէն աւելի հետաքրքրականն է ու կը մնայ Եւրոպան, հակառակ անոր որ Հարաւայի Ամերիկայի մէջ անհկա շատ աւելի ժողովրդականութիւն ունի: Սակայն այն կազմակերպութիւնը, որ կայ եւ հսկայական գումարները, ոորոնք կը ծախսուին Եւրոպայի մէջ, զայն կը դարձնեն բնականաբար ամենէն հետաքրքրականը, մանաւանդ որ հինգ ցամաքամասերուն աստղերը մաս կը կազմեն եւրոպական կարկառուն ակումբներու:


Այս իմաստով, 2002-2003 եղանակը արդէն իսկ սկսած է միջազգային լուսարձակները կեդրոնացնել Եւրոպայի վրայ: Մոնտիալի աւարտով կը կարծուէր, որ այս տարի ազգային ախոյեանութիւնները պիտի մնան շուրջ մէջ, բայց այդպէս չեղաւ: Ընդհակառակը, աստղերը կը շարունակեն տակաւին մեծ գումարներով փոխանցուիլ խումբէ-խումբ: Վերջին օրինակը Ռոնալտոյինն է: Ան Ինթեր Միլանէն (Իտալիա) փոխանցուեցաւ Ռէալ Մատրիտի (Սպանիա), փոխան 47 միլիոն տոլարի: Այսպէսով, Ռէալ Մատրիտի իր կազմէն ներս ունենաւ շողացող աստղերու մեծագոյն հոյլը՝ Զիտանով, Ռոպերթո Քարլոսով, Ֆիկոյով, Ռոնալտոյով...

Եւրոպայի մէջ ֆութպոլի հինգ գլխաւոր երկիրներէն՝ Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Սպանիոյ մէջ արդէն իսկ ախոյեանութիւնները սկսած են, իսկ Իտալիոյ մէջ յառաջիկայ Կիրակի օր կը տրուի ազգանշանը: Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ արդէն պայքարը լրջօրէն սկսած է մեծերուն միջեւ: Սպանիոյ մէջ տակաւին անցեալ Կիրակի օր տեղի ունեցան Ա. հանգրուանի մրցումները, բայց արդէն լուսարձակները առաւելաբար կեդրոնացած են երկու հսկաներուն՝ Ռէալ Մատրիտի եւ Պարսելոնայի վրայ, իսկ դարձեալ աուրաստուողներ են Տեֆորթիօ Քորուան եւ Վալենսիա:

Անգլիոյ մէջ Մանչեսթըր Եունայթըտ - Արսենալ - Լիվըրփոլ ետեակը դարձեալ կը գրաւէ լուսարձակները, Ֆրանսայի մէջ Լիոն, Օքսեր, Փարիզ Սէն Ժերմէն, Նանթ եւ Պորտո կը գտնուին միշտ յառաջապահ դիրքերու վրայ, իսկ Մարսէյ, որ մեծագոյն խումբն է Ֆրանսական, կը շարունակէ ինքզինք վերագտնելու ընթացքը՝ հինգ տարիէ ի վեր: Գերմանիոյ մէջ Պայերն Միւնխիխ եւ Պայեր Լեյքցոյնգընի միջեւ պայքարը այս եղանակին եւս սուր պիտի ըլլայ, իսկ Կիրակի օր սկսող Քալչիոյի տիտանները դարձեալ պիտի ըլլան Եուրոպայի, Ինթեր Միլան, Ա. Սէ. Միլան եւ Ա. Էս. Ռոմա:

Անգլիոյ մէջ Մանչեսթըր Եունայթըտ - Արսենալ - Լիվըրփոլ ետեակը դարձեալ կը գրաւէ լուսարձակները, Ֆրանսայի մէջ Լիոն, Օքսեր, Փարիզ Սէն Ժերմէն, Նանթ եւ Պորտո կը գտնուին միշտ յառաջապահ դիրքերու վրայ, իսկ Մարսէյ, որ մեծագոյն խումբն է Ֆրանսական, կը շարունակէ ինքզինք վերագտնելու ընթացքը՝ հինգ տարիէ ի վեր: Գերմանիոյ մէջ Պայերն Միւնխիխ եւ Պայեր Լեյքցոյնգընի միջեւ պայքարը այս եղանակին եւս սուր պիտի ըլլայ, իսկ Կիրակի օր սկսող Քալչիոյի տիտանները դարձեալ պիտի ըլլան Եուրոպայի, Ինթեր Միլան, Ա. Սէ. Միլան եւ Ա. Էս. Ռոմա:

Ռոնալտո կը ցուցադրէ Ռէալ Մատրիտի իր շապիկը



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԻՆԿ ՓՈՆԿԻ...

Շարունակուած՝ 4րդ. էջէն

ըր պէտք է ըլլան արհեստավարժ (ինչ որ վերել նշուեցաւ), որպէսզի անոնց միակ մտահոգութիւնը ըլլայ փինկ փոնկը:

Հ.- Արդեօք Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց խումբը ներկայիս ի՞նչ վիճակ կը պարզէ: Մարզիկները իրենց փորձերը մշտական հերթականութեամբ կը կատարեն:

Պ.- Կրնամ ըսել, որ Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց կազմը ներկայիս կը գտնուի իր փառքի օրերուն մէջ, նկատի ունենալով, որ առաջին հերթին անոնք բոլորը իրարու տարեկից են, ինչ որ պատճառ կը դառնայ որ մարզիկներուն միջեւ փոխարարութիւնը ըլլայ սպասուածէն շատ աւելի լաւ:

Պէտք է ըսել, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները կը հանդիսանան Լիբանանի այժմու գորաւորագոյն տարրերէն:

Պարզ օրինակ մը տալու համար, Ամմանի մէջ տեղի ունեցած մրցաշարքին, երբ օտար մարզիկներ տեսած են Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց ետեակը, հարց տուած են իրարու, թէ արդեօք մրցաշարքին մասնակցողը Հ.Մ.Ը.Մ.ն է, թէ՛ Լիբանանի ազգային խումբը:

Ազգային խումբին մարզիկներուն մեծամասնութիւնը կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները, ինչ որ լաւագոյն ապացոյցն է, թէ անոնք այլ ակումբներու մարզիկներէն շատ աւելի գորաւոր են:

Դժբախտաբար սակայն Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները իրենց ամենօրեայ փորձերը իրենց ակումբին մէջ չէ որ կը կատարեն:

Կը յուսանք, որ ամենէն կարճ ժամանակամիջոցին փինկ փոնկի մարզիկներուն խոստացուած փորձերու վայրը տրամադրուի անոնց, որպէսզի աւելի լաւ պայմաններու մէջ իրենց փորձերը կատարեն:

Եթէ անոնք փոխադրուին «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.»ի մարզադաշտը, վստահ եմ, որ անոնց թիւը պիտի կրկնապատկուի եւ տասնապատկուի եւ նորանոր «աշակերտներ» պիտի ուզեն միանալ անոնց:

Հ.- Ի՞նչ է արդեօք պատճառը, որ փինկ փոնկի մրցումներուն ընթացքին թրիպիւնները ամբողջութեամբ կ'ըլլան պարապ:

Պ.- Իսկապէս, որ զարմանալի է այս երեւոյթը, որովհետեւ եթէ այլ մարզաձեւերու մէջ դաշտերը կը լեցուին գրեթէ ամբողջութեամբ, փինկ փոնկի մրցումներուն կը պարզուի հակառակ պատկերը: Ընդհակառակը, պէտք է փինկ փոնկի մրցումներուն աւելի ներկաներ ըլլան, մանաւանդ, որ մուտքը ձրի է:

Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր խումբերուն մէջ ամենէն գորաւորը փինկ փոնկի կազմն է, որ պատասխանատուներուն եւ համակիրներուն նեցուկը եւ գորակցութիւնը վայելելով՝ պէտք է աւելի վերելք արձանագրէ եւ միւսներուն նման նահանջի ճամբան չբռնէ:

Հ.- Վերջերս ի՞նչ մրցաշարքի պիտի մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները: Անոնք յոյս ունի՞ն լաւ արդիւնքներ արձանագրելու:

Պ.- Սեպտեմբերին տեղի պիտի ունենայ Լիբանանի փինկ փոնկի տղոց եւ աղջկանց անհատական ախոյեանութեան մրցաշարքը, որուն ընթացքին կ'ակնկալուի, որ Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը եւ աղջիկները իրենց առաւելագոյն արդիւնքը տան:

Կը սպասուի սակայն, որ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները մեծաթիւ շարքերով ներկայ գտնուին, այնպէս ինչպէս անոնք կը լեցնէին ֆութպոլի եւ պասքեթպոլի թրիպիւնները:

Հ.- Վերջին խօսք:

Պ.- Խորին շնորհակալութիւն կը յայտնենք «Ազդակ»ի «Նաւասարդ» մարզական յաւելումին, որ յատուկ տեղ տրամադրեց մեզի:

Զեզի կը մաղթենք նորանոր յաջողութիւններ եւ մեր փափաքն է, որ «Նաւասարդ»ին ձայնը լսելի դառնայ Լիբանանէն դուրս, այլ գաղութներու մէջ ալ:

ԹԵՆԻՍԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՅՔԵՐ ՀԱՄԱՅԱՆՑԻՆ ՎՐԱՅ

Համացանցին վրայ թենիսի լուրերու եւ վերլուծականներու յատուկ կայքերէն ոմանք բառացիօրէն վայրկեանը - վայրկեանին տեղեկութիւններ կը փոխանցեն աշխարհի որեւէ անկիւնը տեղի ունեցող միջազգային մրցաշարքերուն մասին: Արդարեւ, արդիական դրութիւններու օգտագործումով, այս կայքերը մրցումներու արդիւնքները ուղղակիօրէն կը սփռեն համացանցի միջոցով, արագութեամբ մը, որ համացանցէն արդիւնքին հետեւողը ոչինչով ուշ կը մնայ մրցաշարքի մը ուղղակի դաշտէն հետեւողէն: Տակաւին չենք խօսիր անշուշտ նոյնքան մեծ արագութեամբ փոխանցող լուսանկարներու մասին:

Ստորեւ կը ներկայացնենք շարք մը կայքեր, որոնք թենիսի սիրահարը անպայմանօրէն պիտի հետաքրքրեն իրենց այլազանութեամբ եւ շահեկանութեամբ:

● www.atptour.com - Արհեստավարժ *Թենիսիստներու* Միութեան պաշտօնական կայքը կ'ընդգրկէ լրատուութիւններ, արդիւնքներու ամբողջական ցանկ, վիճակագրական մանրամասն տուեալներ, *թենիսիստներու* կենսագրականներ, միջազգային մրցաշարքերու տարեկան օրացոյց, լուսանկարներ եւ միջազգային դասաւորում:

Ընդարձակ այս կայքին միջոցով կարելի է «այցելել» նաեւ ամբողջ շարքում մը ընթացքին տեղի ունեցող մրցաշարքերու պաշտօնական կայքերը, աւելի մանրամասն կերպով հետեւելու համար նորութիւններու:

● www.wtatour.com

Արհեստավարժ *Թենիսիստներու* Միութեան պաշտօնական կայքը թէեւ իր ընդարձակութեամբ որոշ չափով կը զիջի *թենիսիստներու* պաշտօնական կայքէն, սակայն հեռու է նուազ հետաքրքրական ըլլալէ:

Կայքը կ'ընդգրկէ Միութեան մասին տեղեկութիւններ, «Լուրերու սենեակ», մարզիկներու եւ մրցաշարքերու մասին մանրամասնութիւններ, ինչպէս նաեւ «մարզիչին անկիւնը» եւ «դաշտերէն հեռու» բաժինները:

● www.tennis.com - Համաշխարհային համբաւ վայելող եւ լայն տարածում ունեցող «*Թենիս*» ամսաթերթի պաշտօնական կայքը կ'ընդգրկէ




լուրեր, *ֆորում*, ե-նամակի դրութիւններ եւ ամսաթերթի արխիւներուն յատկացուած բաժին, ուր տեղադրուած է թերթի նախորդ թիւերէն ընտրուած յօդուածներու հարուստ հաւաքածոյ մը:

● www.tennisserver.com


Թենիսի մասին ուսումնասիրական եւ վերլուծական յօդուածներ, ինչպէս նաեւ արհեստավարժ մարզիչներու խիստ շահեկան ցուցմունքներու ներկայացնող կայք մըն է «*թենիս սըրվըր*»ը:

Թենիսի լրատուութիւններու նուիրուած այլ կայքեր են՝

- www.espn.go.com/tennis
- cbs.sportsline.com/tennis
- cnnsi.com/tennis
- www.real-tennis.com
- www.sports.yahoo.com/ten



ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ



րութեան հետ գործակցող բոլոր հաստատութիւնները եւ բնակարանները երբ վերցնեն իրենց հեռաձայնին ընկալուչը՝ պիտի լսուի Պեքհամի ձայնը, որ կ'ըսէ. «Ես Տէյվիտ Պեքհամն եմ: «Այսինչը» բացակայ է: Եթէ կը փափաքիք *մեսաժ* մը ձգել, զայն կատարեցէք «սուրոց»էն ետք»:

● Հաղորդակցութեան «*Վոտաֆոն*» ընկերութիւնը, որ նաեւ Մանչեսթըր Եունայթըդ խումբը հովանաւորող ընկերութիւններէն մէկն է, 2 միլիոն սթերլին արժողութեամբ պայմանագրութիւն մը ստորագրած է Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին եւ Մանչեսթըր Եունայթըդի խմբապետ Տէյվիտ Պեքհամի հետ:

Պայմանագրութիւնը հետեւեալն է. «*Վոտաֆոն*» ընկե-

րութեան միջոցով լսելի պիտի դառնայ 104 միլիոն հեռաձայնողներու:

● Աշխարհի բոլոր ժամանակներու ֆութպոլի տիտաններէն արժանօրինակ Մարատոնա, մարզական աշխարհին մէջ իր յաջողութիւններէն ետք, մտադրած է թափանցել... մշակութային աշխարհ:

Ան իր երկու դուստրերուն՝ Տալմայի եւ Ժիաննայի, ինչպէս նաեւ՝ արժանօրինակ հոշակաւոր երգիչ Ալեխանտրօ Ռոմերոյի ընկերակցութեամբ հրապարակած է *Սի. Տի.* մը, որուն հաստիքը ամբողջութեամբ պիտի օգտագործուի բարեւիրական նպատակներու:

Մարատոնա նաեւ հաղորդավարը պիտի ըլլայ արժանօրինակ «*Ամերիքա*» պատկերասփիռի կայանէն «*Մարատոնա Շօ*» յայտագիրին, ուր ան այլազան միջոցով հարցազրոյցներ պիտի ունենայ հոշակաւոր անձերու հետ, ինչպէս՝ Արժանօրինակ նախկին նախագահ Քարլոս Մենկեմի եւ Քուպայի նախագահ Ֆիտլի Քասթրոյի:



ԹԵՆԻՍԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ». ԾԱԳՈՒՄԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ՝ ԱՆՊԼԻԱԿԱՆ



Կրաֆ

Կոլֆին, կոփամարտին, ըմբշամարտին և արևելաֆուտբոլին կողքին՝ թենիսը կը հանդիսանայ շատ մեծ ժողովրդականություն վայելող անհատական մարզախաղերէն մէկը, որ կը թուի «ծնած» ըլլալ 12-13րդ դարու ֆրանսական խաղէ մը, որ կը կոչուէր «jeu de paune»

(ափի խաղ): Ըստ հաւանաբար թենիս բառը եկած է ֆրանսերէն՝ «Tenez» (առէ՛ք) բայէն. հին ժամանակ, առաջին գնդակը հարուածողը իր մրցակիցէն կը պահանջէր ստանալ իր հարուածը եւ պատասխանել անոր:

Իսկ ինչ կը վերաբերի արդի թենիսին, անկա ծնունդ առած է 1873ին, երբ կալէսցի սպայ Ուոլթըր Քլափթըն Ուինկֆիլտ Անգլիոյ մէջ ներկայացուցած է քառանկիւն դաշտի վրայ *նաբէթ*ներով խաղցող այս մարզախաղը: Աւելի ուշ, 1874ին, Մէլբի Եուինկ Աութըրպրիմի միջոցաւ՝ թենիսը անցաւ նաեւ Ամերիկա:

Թենիսի պատմութեան կարեւորագոյն դէպքը պատահեցաւ երբ Անգլիոյ մէջ հոշակաւոր «All - England Croquet Club»ը Լոնտոնի մօտակայ Ուինսլըտըրնի շրջանին մէջ թենիսի համար դաշտեր տրամադրելով՝ իր անունը փոխեց «All England Croquet & Tennis Club»ի: 1877ին, Ուինսլըտըրնի մէջ տեղի ունեցաւ թենիսի առաջին մրցաշարքը, որուն 22 մասնակցողներէն Սփենսըր Կոր տիրացաւ բաժակին:

1880ական եւ 1890ական տարիներուն սկսաւ Անգլիայէն դուրս թենիսի թափանցումը: Արդարեւ, 1881ին կազմուեցաւ Միացեալ Նահանգներու թենիսի ֆետերասիոնը՝ ԵՈՒ. ԷՍ. ԹԻ. ԷՅ.ը: Նոյն տարին Եու. Էս. Թի. Էյ. Նիուփորթի մէջ (Ռոտ Այլընտ նահանգ) կազմակերպեց թենիսի մրցաշարք մը, որ աւելի ուշ շարունակուեցաւ տարեկան դրութեամբ, մինչեւ օրս: Մինչ այդ, թենիսի ախոյեանութիւններ սկսան կազմակերպուիլ Նոր Զելանտայի (1886), Ֆրանսայի եւ Հար. Ափրիկէի (1891), Գերմանիոյ (1892) եւ Աւստրալիոյ մէջ (1905):

1899ին, ամերիկացի Տուայթ Տէյվիս նուիրեց «Տէյվիս» բաժակը եւ այսպիսով սկսաւ աշխարհի տարածքին տղոց ազգային խումբերու համանուն ամենէն հոշակաւոր մրցաշարքը: Ներկայիս այս մրցաշարքին կը մասնակցին աշխարհի առաջնակարգ 16 ազգային խումբերը, իսկ աշխարհի տարածքին տարբեր երկիրներ կը մրցին իրարու դէմ՝ այս 16ին մէջ ըլլալու համար: Նշենք, թէ մինչեւ 1970ական թուականները, այս մրցաշարքին տիտղոսին տիրացած էին միայն Միացեալ Նահանգներ, Աւստրալիա, Անգլիա եւ Ֆրանսա:

Տէյվիս բաժակի մրցաշարքէն քանի մը տարի վերջ, պիտի սկսէր Ա. աշխարհամարտը սանեցնելով բոլոր մրցումներն ու ախոյեանութիւնները: Զինադադարէն ետք, 1926ին, մեծ դրամատերներու կողմէ հիմնուեցաւ թենիսի վարպետներու «ցանց» մը, որուն մաս կազմող արհեստավարժ թենիսիստներն ու թենիսիստները այս դրամատերներուն հովանաւորութեամբ՝ կը մրցէին իրարու դէմ:

1938ին ամերիկացի Տոն Պան հանդիսացաւ առաջին անձը, որ մէկ եղանակի ընթացքին կը տիրանայ 4 կրան շրլէմ տիտղոսներուն (Միացեալ Նահանգներու, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Աւստրալիոյ կրան շրլէմ մրցաշարքեր): Աւելի ուշ, այս նոյն իրագործումը կատարեցին թենիսիստներ Ռոտ Լեվըր (աւստրալիացի՝ 1962 եւ 1969) եւ թենիսիստներ Մորիս «Լիթըլմօ» Քոնրլի (ամերիկացի՝ 1953), Մարկարէթ Քորթ (աւստրալիացի՝ 1990) եւ Շթեֆի Կրաֆ (գերմանացի՝ 1988):

Բ. Աշխարհամարտը դարձեալ արգելք հանդիսացաւ այս մարզախաղի բարելաման: Սակայն, 1946ին, թենիսի մրցումները դարձեալ թափ առին՝ մի՛շտ ու մի՛շտ Միացեալ Նահանգ-

ներու տիրապետութեամբ, որ «հրամցուց» Ճէք Քրէյմըրի, Ճէյ Էտուըրտ «ՊԱՄ» Փէթիի եւ Ալթէա Կիպարնի (առաջին սեւամորթ ախոյեանուհին) նման հսկաներ:

Շուտով, սակայն, պիտի հասներ աւստրալիական տիրապետութեան շրջանը: Արդարեւ 1950ական եւ 1960ական թուականներուն, Աւստրալիա իր գերակայութիւնը փաստեց Ֆրէնք Սեմսէնի, Ռոյ Էմերսընի, Քէն Ռոզուելի, Էշլի Քուիթրի եւ Ռոտ Լեվըրի նման հսկաներու շնորհիւ, որոնք յաջողեցան 18 տարուան ընթացքին 15 անգամ տիրանալ Տէյվիս բաժակին: Միեւնոյն ժամանակ, 1963ին թենիսի միջազգային ֆետերասիոնը կազմակերպեց Տէյվիս բաժակի աղջիկներու տարբերակը՝ Ֆետերէյշընի բաժակը, որուն տարիներ շարունակ տիրապետեցին ամերիկացիները:

1967ին բրիտանական ֆետերասիոնը պահանջեց բաց մրցաշարք մը կազմակերպելով ապահովել բոլոր մարզիկներուն մասնակցութիւնը, ըլլան անոնք արհեստավարժ կամ ոչ: Թէ՛ւ պահանջը մերժուեցաւ, սակայն բրիտանացիներուն հաստատ եւ վճարուած կեցուածքին շնորհիւ, ֆետերասիոնը շտապ ժողով մը գումարելով որոշեց այսուհետեւ արհեստավարժներն ու ոչ արհեստավարժները չտարբերել եւ վաւերացուց 12 միջազգային բաց մրցաշարքներ: 1968ին նոյնիմէն Բրիտանիա կազմակերպեց տղոց եւ աղջիկներու առաջին բաց մրցաշարքը:

Այս բոլոր դէպքերը եւ կազմակերպուած մեծ թիով մրցաշարքներն ու անոնց ընթացքին տրամադրուած նիւթական մեծ պարգեւները ճամբան հարթեցին համադաշնակցութիւններու կազմակերպութեան: Արդարեւ, մարզիկներուն իրաւունքները պաշտպանելու եւ զանոնք աւելի կազմակերպելու համար գործի լծուեցան Էյ. Թի. Փի (տղոց) եւ Տապլիու Թի. Էյ. (աղջիկներու) համադաշնակցութիւնները: Ներկայիս այս երկու միութիւնները մարզիկներուն ընդհանուր դասաւորումները կը հրապարակեն եւ մրցաշարքերու ծիրէն ներս շատ մը ծառայութիւններ կը մատուցեն Այ. Թի. Էֆ.ին, որ «կը տնօրինէ» թենիսի աշխարհը:

Համադաշնակցութիւններու կազմութենէն ետք, թենիսը յաւելեալ հոշակ ստացաւ պատկերասփիռի սփռումներուն շնորհիւ: Արդարեւ, հազարաւոր համակիրներ պատկերասփիռի միջոցաւ ուղղակի սկսան հետեւիլ 1970ականներու հսկաներուն՝ Ճիմի Քանըրդի, Մոն Մաքընրոյի (ամերիկացիներ), Պիորն Պորկի (Շուէտ) իրագործումներուն:

1990ականներու ամերիկեան տիրապետութենէն ետք, արեւը դարձեալ ծագեցաւ Եւրոպայի վրայ, որովհետեւ 1980ականներուն Շուէտ, Զեխոսլովաքիա եւ Արեւմտեան Գերմանիա Պիորն Պորկի (Շուէտ), Մարթինա Նաւրաթիլովայի, Իվան Լենտլի (Զեխոսլովաքիա) եւ Պորիս Պեքքրի ու Շթեֆի Կրաֆի (Գերմանիա) նման աստղերու շնորհիւ փայլուն արդիւնքներ արձանագրեցին եւ թենիսի խանդավառութիւնը վերադարձուցին այս մարզաձեւի ծննդավայրը՝ Եւրոպա:

Այս բոլոր «թենիսի հրաշքեր»ուն վրայ աւելի ուշ եկան աւելնալու Փիթ Սամփրասի, Անտրէ Ակասիի, Շթեֆան Էտպըրկի նման աստղեր, որոնք խանդավառեցին եւ ոմանք տակաւին կը շարունակեն խանդավառել աշխարհի տարածքին թենիսի հազարաւոր սիրահարները: Նշենք նաեւ, թէ Սամփրաս, որ իր սքանչելի խաղարկութեամբ հանդիսացաւ բոլոր ժամանակներու աշխարհի մեծագոյն հսկաներէն մէկը, յաջողեցաւ հաստատել նոր մրցանիշ մը, իր ասպարէզին ընթացքին (մինչեւ օրս) շահելով 12 կրան շրլէմ տիտղոսներ: Արդեօք ան պիտի կարենա՞յ 13րդ մըն ալ շահիլ...

Յոյսով ենք, որ 4 կրան շրլէմներուն, Տէյվիս բաժակի եւ Ֆետերէյշընի բաժակին նման աշխարհահոշակ մրցաշարքներուն ընթացքին կը հանդիպինք նոր «հրաշք մանուկներու» եւ ինչու ոչ՝ ՀԱՅԱՋԳԻ «հրաշք մանուկներ»ու, որովհետեւ միայն նոր աստղերով է, որ թենիսի պատմութեան շղթային վրայ նոր օղակներ կ'աւելնան ու կը շարունակեն խանդավառել թենիսի սիրահարները: Իսկ արժանթինահայ Ռաիթ Նալպանտեան արդեօ՞ք չի գտնուիր այդ ճամբուն վրայ: Օրերը կը փաստեն ամէն բան...



Պորկ